ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի /հայտերի գնահատման նիստի/

ք. Երևան

«15» նոյեմբերի 2017թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ավետիք Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արմինե Ալիխանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում էր՝

Աղավնի Բուդուլյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

1. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.

«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն, «Վարմէքս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 32-րդ կետի 1-ին ենթակետի <<զ>> պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն՝ մասնակիցների կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ. պարբերությամբ նախատեսված՝ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի, «Վարմէքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից եզրակացություն ստանալու նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը ընդմիջել մինչև 2017թ. նոյեմբերի 15-ը՝ ժամը 14:00-ն, դիմել պատասխանատու ստորաբաժանմանը՝ առաջարկելով մինչև սահմանված ժամկետի ավարտը տրամադրել համապատասխան եզրակացությունը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Սահմանված ժամկետում պատասխանատու ստորաբաժանումը տրամադրել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի՝ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի, «Վարմէքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

4. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.

«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի, «Վարմէքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը՝ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի, «Վարմէքս» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը և ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող անձնաժողովը որոշեց՝

- ✓ հաստատել հայտերի գնահատման արդյունքները և

-3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Վարմէքս» ՍՊԸ-ին,
-4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին,
-5-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ին,

- ✓ հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),
- ✓ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նիստը

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ավետիք Ավագյան

Անդամներ՝

Էդգար Տոնականյան

Կարեն Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Քարտուղար՝

Արուս Խաչատրյան